

ՏԱՍԵՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Յարեկան զինը 10 բուրջի, կես տարվանը 6 բուրջի, Առանձին համարները 7 կուպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բայց է առաւօտեան 10—2 ժամ (բայց կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կուպէկ.

ԱՌԱՋԻԿԱՅ 1891 ԹԻՒԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՐԱԿԱՔՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն զիւրքով և նոյն պրօգրամայով: Մենք կը ստանանք սեփական շնորհակալութիւններ: «ՄՇԱԿ» տարեկան զինը 10 բուրջի է, վեց ամսվանը 6 բուրջի. Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՌՄԲԱՍՏԱՆԸ (Բարձրագոյն և Բարձրագոյն փողոցների անկյունում, Թամանշիկի տանը). Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող. ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔՐԱԿԱՔՐԱԿԱՆ ԼՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Արանով յայտնում է ընդհանուր գիտութեան, որ Թիֆլիսի Գումայի 1891—1894 թուականի համար 3-րդ կարգի ձայնաւորներ ընտրելու նպատակով 18-ին ներկայ նոյն ժամանակ օրինական կերպով կայացած ժողովի շարունակութիւնը, կայանալու է կիրակի օր, նոյեմբերի 25-ին, Թիֆլիսի ազնուականների կառուածական բանկի թատրոնական դահլիճում:

Ժողովի նիստի սկիզբը նշանակված է ուշից 9 ժամին առաւօտեան: Ժողովում կարող են մասնակցել, ինչպէս նոյեմբերի 18-ի նիստին մասնակցած անձինք, այնպէս էլ 3-րդ կարգի մասնակցողները ընդհանրապէս: Պարագմունքների առարկաներն են.

1) Կանդիդատների անունների առաջարկութիւնը տոմսակներով, որոնք կը ընդունվին մինչև ցերեկայ 12 ժամը, և 2) կանդիդատների անունանշանակի կազմելը ստացած ձայների մեծամասնութեան կարգով:

Ինչ վերաբերում է կանդիդատների անունների գնտակներով քուէարկելուն, այդ քուէարկութիւնը կը կատարվի նոյն կարգով հետևեալ կիրակի օր, դեկտեմբերի 2-ին, որի մասին կը յայտարարվի առանձնապէս:

Մուտքի համար նոյեմբերի 18-ին տրված տոմսակները, անվաւր են համարվում ներկայ ժողովում: Պ. պ. ընտրողների իրաւունքները վերաստուգելու և նոր տոմսակներ տարու ժամանակ այդ վերաստուգութեան գործը հեշտացնելու համար նոր տոմսակները, բայց թատրոնական դահլիճը մտնելու րօպէին, կարելի է վաղորօք ստանալ քաղաքային վարչութեան մէջ, նոյեմբերի 22-ից մինչև նոյն ամսի 24-ը, սկսած ժամը 12-ից մինչև 2 ժամ, կէսօրից յետոյ: 1—2

ԲՈՎԱՆԳՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Առևտուրը Պարսկաստանի հետ. Նամակ Բաթումից. Նամակ Նոր-Բալադից. Նամակ Գորիսից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՊԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կօրի զիւրք. Արտաքին լուրեր. — ՌԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԻՆԳԵԱՐԹԻՆԵՐ. — ԲՈՐՍՍԱՅԱՍՏՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՆՊՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՆՊՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՆՊՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՆԵՏՈՐԻՔ ՊՈՐՏՎԱՍՏԱՆԻ ՀԵՏ
Ռուսաց առևտրին և արդիւնաբերութեանը նպաստող ընկերութեանը զբաղեցնում է միջոց Պարսկաստանի հետ ուսուցաց առևտրի զարգացման հարցը: Նորիւրում Պետերբուրգում, վերոյիշեալ ընկերութեան նիստերից մինում, պ. Ս. Մ.

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ

Սյն օրից՝ երբ մարդկանց պահանջները լայնացան և նրանք մենակ անձամբ չը կարողացան այլ ևս լիութիւն տալ իրանց բաղաձայնական պահանջներին և ինքն ըստ ինքեան, զրթել ընկանաբար — որի հիմունքներում ապահանջ թաղանթում էր ժամանակի լինադողութիւնը — սկսվեց աշխատանքի բաժանումը. — առևտուրը ժողովուրդների կենտրոնը դարձաւ մի ամենաստորական երևոյթ: Առևտուրի դէմ մինչև անգամ սկզբունքով վիճել — դժուար է. ճիշդ է, կարելի է ցանկալ, նոյն իսկ պէտք է և հարկաւոր է ամեն ճիշ թափել կանոնաւորելու, ամենահարկու նրան խելաթի և արդար յատակադձերի վրայ — բայց կուէր, մաշակել առհասարակ նրա գոյութեան իրողութեան դէմ, ջանալով բոլորովին նրան ջնջել, ոչնչացնել. — և անկարելի է, և իզուր է, քանի որ մարդն ու մենակ չէ կարող արդիւնաբերել և ստանալ այն բոլորը, ինչ որ դարձել է այսօր ամենաստորական առարկայ նրա ֆիզիկական և հոգեկան պահանջների:

առհասարակ կազմակերպել նրան, քանի որ այդ բոլորը և շատ լայն է և մեր կարգերի ժամանակ քիչ էլ անյարմար, — մենք, ինձ թվում է, կարող էինք մտանալ նրան մի և նոյն ձգտումներով և ուրիշ կողմից: Ինձ թվում է, թէ մենք կարող էինք նշանաւոր աստիճանի բարեփոխած լինել առևտրականութեան, դրամական օպերացիաների բնաւորութիւնը, հետևաբար և նրա ուղղութիւնը ու ամբողջ կերպարանը, եթէ մենք, թողնելով մինչև ևս անգամ առևտրականութիւնը մի և նոյն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ որ կայ և գտնուում է նա այժմս, — կամայկանց ներս մտցնելինք նրա մէջ — նրան սովորական, յաճախ անմիտ, քմահաճ, ոչ ինչ բարձր շարժառիթներից չը զրոյթած, սոսկ վաշխառուական, հարստահարական օրջեկտներին տեղ այն մեր բոլոր բարձր շահերը, որոնք ինքն-ինքեան կարող են ոչ միայն ամբողջ յեղափոխութիւն առաջ բերել մեր մտաւոր կուլտուրայի մէջ, այլ և թանգազին և ճիւղերի մէջ, գտնվելով ամենամաքնակալան, պրիսիբիլ են մեզ համար ներկայ լուպէին: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ գործ ունենալով այդպիսի քնքառ առարկաների հետ, նրանց ներմուծումը մեր դրամական յարաբերութիւնների չըջանի մէջ մեր կողմից պիտի կատարվի ամենամեծ զգուշութեամբ և աշխարհութեամբ նրանց իրանց էութեանը մէջ չը շօշափելու համար... Պէտք է պայմանաւորուել մենք չենք ասում, որ մեր առևտրական գործողութիւնների շըջանից բոլորովին պէտք է դուրս վճարել ուրիշ, այսպէս ասած, աւելի ստորին կարգի առարկաները:

Մի կաշկեղի կարգաց մի զեկուցում, որը ամբողջապէս նուիրված էր այդ հարցին: Զեկուցանող պ. Միկաշկեղի 9 ամիս անցկացրեց Պարսկաստանում և ամեն կողմից ծանօթացաւ թէ ուսուցաց առևտրի և թէ օտարների առևտրի դրութեան հետ այդ երկրում: Որքան նա կարողացել է նկատել, ուսուցաց ապրանքներից Պարսկաստանում ժողովրդականութիւն ունեն ծանրաբաշ ապրանքներ, որոնք ցածր գին ունեն: Իսկ նա ծախվում հում և կիրամշակ արդիւնքներ: Հիւսիսային Պարսկաստանում ուսուցաց պատրաստի ապրանքները առհասարակ բոլոր ապրանքների 1/7 մասն են կազմում, բայց իսկական տոկոսը աւելի պակաս է: Բաւական լաւ գին ունեն Պարսկաստանում ուսուցաց մետաղները, սակայն նոյնպէս, զլիսաւորապէս որպէս հում մթերք: Մետաղական գործուածքներից լաւ են ծախվում միայն այնպիսիները, որոնք աւելի էժան են: Ընդ նոյնը կարելի է ասել և ապակու մասին: Պատահանների ապակին Ռուսաստանից է ուղարկվում Պարսկաստան, ապակեայ կամ ֆայանսի ամանեղենների էժանագին տեսակները, նոյնպէս և ապակի էժանագին ապրանքները Ռուսաստանից են ուղարկվում և լաւ են ծախվում Պարսկաստանում, իսկ այնտեղ առնուղ ապակեայ և ֆայանսի աւելի թանգ և բարձր տեսակները արտասահմանից են բերվում: Ռուսաց գաղութներին, պարֆիւնըրական և չիթիկն ապրանքների հետ ևս զորից կերպով մրցում են արտասահմանեան ապրանքները: Ռուսաց վաճառականները Պարսկաստանում գործակալութիւններ չունեն ծախվում: Իսկ է ծախվում ուսուցաց շաքարը Պարսկաստանում: Միայն այդ երկրի հիւսիս-արևմուտքում գործ է ածվում այսպէս անուանված «Մարաշի շաքար» որը, սակայն, գերմանական է, միայն ֆրանսիական գրքով: Չիթիկի և կերպաներից Պարսկաստանում այն տեսակներն են ծախվում, որոնք արտասահմանում չեն պատրաստվում, օրինակ, դեմիլիտանը և այլն: Բայց դրանում ևս ուսու վաճառականներին շատ դժուար է մրցել արտասահմանեան առևտրականների հետ: Պարսկիների համար էժանութիւնը և նորութիւնը ամեն բան է: Իսկ ուսուց չիթիկի և գործուածքների նկարները միակերպ է, և յաճախ չեն յարմարվում տեղեան գնորդների պահանջներին, նրանց բնաւ ոչ. ինձ թվում է թէ կարելի է առաջ բերել մի շարք առարկաների, որոնց զարգացումը կարելի է ասել նոյնքան սերտ կապված է երկրի առաջադիմութեան և նրա բարօրութեան հետ, ինչպէս և բարձր, հոգեւոր — մտաւորական շահերը: Այդպէս են օրինակ մեր երկրի բոլոր գնական հարստութիւնների շահագործութիւնը — հանքերի, հանքաջրերի, դրամազան թանգազին միջնաբերի, քարածխի, նաւթի և այլն, որոնք ճիշ տրված լինելով մեզ ընտրութիւնից, վաղուց է ինչ պատում են իրանց հերթին արդիւնաբերման համար: Այդպէս են մեր երկրի բոլոր հում բերքերը, սկսած արմուխներից, բոյսերից, պտուղներից, վերջացնելով ջրային և հողային կենդանիներով, որոնք դարձեալ ամենամեծ առատութեամբ տրված լինելով մեզ, — սպասում են մեր կողմից կանոնաւոր և խելացի արդիւնաշահութեան (էկոլոգատացիայի): Այդպէս է մեր ամբողջ դիւրապատեանական գործը, որը իր բոլոր ճիւղերի մէջ, գտնվելով ամենամաքնակալան, պրիսիբիլ զրութեան մէջ, պահանջում է թէ երկրի և թէ ամբողջ ազգայնականութեան բարօրութեան համար, ամենառաւմադին տեխնիկական վերածնութիւնը: Երկրագործութիւնը, անասնապահութիւնը, ձկնորսութիւնը, հանքագործութիւնը և այլ երկրային արդասիւնքներ, որոնցից մարդը քաղում է ստանում է իր բոլոր միջոցները իր գոյութեան համար, — գտնվում են ամենաթշուառ տեխնիկական շահագործութեան ձեկ մէջ, և նրանց առա-

ջանութիւնը պակաս է արտասահմանեան չիթիկ լայնութիւնից, գոյնը հատուտուն չեն. մի և նոյնը կարելի է ասել և մահուդների վերաբերմամբ: Արտասահմանեան վաճառականները, որոնք հեղեղում են Պարսկաստանը իրանց ապրանքներով, առանձին ապրանք են պատրաստում նրա համար, որը, ի հարկէ, չէ գործածվում և չէ ծախվում իրանց հարեւրները: Օրինակ, Պարսկաստանի համար պատրաստվում են թաշկինակներ շիւների կրօնական արձանագրութիւններով և այլ թաշկինակները շատ լաւ են ծախվում այդ երկրում: Արտասահմանեան ֆիրմաները իրանց սեփական նկարիչներ ունեն Պարսկաստանում, որոնք կազմում են տեղական գնորդների ճաշակին բաւարարութիւն առողջ նկարներ: Ռուսաց առևտրական ֆիրմաները դրա նման մի բան չունեն: Բայց ուսուցական առևտրի զարգացման զլիսաւոր խոչնդողը Պարսկաստանում կազմում է հարողակցութեան ճանապարհների բացակայութիւնը: Պարսկաստանը նաւահանգիստներ համարեալ չունի, այնպէս որ ծովով ապրանք հասցնելը շատ դժուար է, ճանապարհները դժուարացնելի են, իսկ ճիւղերի վրա բարձած ապրանք տեղափոխելը շատ թանգ է նստում և ապրանքը այդ պատճառով էլ վաճառականները ստիպված են լինում թանգ ծախել: Սյն ինչ արտասահմանեան ապրանքները բոլորովին ուրիշ պայմանների մէջ են գտնվում: Տեղափոխութեան եղանակները աւելի կատարեալ են, արտասահմանեան ապրանքների համար լաւ շուկայի ճանապարհներ կան և այլն: Այդպիսով Պարսկաստանը, չը նայելով որ Ռուսական նա աւելի հեռու է Ռուսաստանից, քան լիւբլիւնից կամ Վոնդօնից: Հեռագիրն անգամ Ռուսաստանի առևտրի խոչնդոտն է յայտնվում Պարսկաստանից Մոսկուա ուղարկված հեռագիրը երեք-չորս օրում է հասնում: Այդ հանգամանքը անհնարին է դարձնում իր ժամանակին ապրանքների պատրաստել և ուղարկել: Ռուս վաճառականները փորձեցին գրասենեակներ բանալ Պարսկաստանում, բայց այդ փորձերը անաջող անցան: Ռուսաց գրասենեակները փակվեցան: Փակվելու պատճառներից մէկն էլ այն էր, որ գրասենեակների համար անաջող կէտեր էին ընտրված: Գրասենեակ բացին Թէհրանում, որը փորձաքանակ և ոչ թէ մեծաքանակ առևտրի կենտրոն է, իսկ չը չաղիմութիւնը, ու աւելի խելացի, զարգացած, ինտենզիվ մշակութիւնը, գիտութեան և տեխնիկայի ցուցմունքների համաձայն, — կարող են միանգամից օտի կանգնեցնել թէ առհասարակ երկրի բարօրութիւնը և թէ ազգայնականութեան ամբողջ անտեսական կենցաղաբարութիւնը: Այդ բոլորը, ասում եմ, ամենայն իրաւամբ, կարող է և պէտք է դառնայ առևտրական գործողութիւնների առարկայ, քանի-որ նրանց հետ կապված են մարդկանց գոյութեան պայմանները: Այդ ճիշդ է, բայց խօսելով բարձր շահերի մասին, որոնց, ասում եմ, ցանկալի էր ներս-մտնել դրամական գործողութիւնների շըջանը, ինձ հաճելի էր նրանց այն լայն, խոր զարգացուցիչ նշանակութեանը համար, որը նրանք ունեն թէ մեզ համար ներկայ լուպէին և թէ առհասարակ մարդկանց կենտրոն: Թողնելով այդ բարձր կարգի ինտերմերից ընտրութիւնը ընթերցողի ցանկութեանը, — ես ՎՄշակի մէջ կը բաւականապէս հրաւիրելով հայ հասարակութեան ուղարկութիւնը գրա կանոնութեան զարգացման վրա, նրա ընդարձակ մտքով: Քաղաքատնտեսութիւնը իր զլիսաւոր, հիմնական գրութիւնը, որի վրա կառուցված է, կարելի է ասել, այդ ամբողջ գիտութիւնը, — տեսնում է մարդու իր անձնական շահերի պաշտպանութեան ձգտման մէջ: Եթէ, ճշմարիտ, այդքան ուժեղ է այդ շահադիտական ձգտումը մարդկանց մէջ և մեզ համար ցանկալի է առաջ տանել այս կամ այն թէկուզ մտաւորական բնաւորութիւն ունեցող

Այն երկու բաղադրանքն է հայ երկուստարանները՝ Կ. Պոլսի և Կ. Պոլսի Թ. Ալաբաբեյան, որոնց ան- յայտ լինելու մասին յայտարարութիւն էր տպւած «Մշակում» իրանց ազգակիցները կողմից Արիւստ- լիա քաղաքից, այժմ յայտնուել են և դրում են իրանց բաժնուկից, որ իրանք մի քանի անգամ նա- մակ էին գրած իրանց ընտանիքներին, թէ Պարս- կաստանից և թէ երկուսից, բայց երկու նամակնե- ըր կորած էին ճանապարհին: Այժմ պարոնները իրանց ընտանիքներին հայտարարութիւն իրանց մա- սին կարգաւորելու պէս, հեռագրած են իրանց ընտա- նիքներին:

ՄՐՈՒԿԱՅԻ մեր թղթակիցներից մինը ինդ- ռում է մեզ տպել հետեւեալը Մոսկուայի հայ հա- տարակութեան ուշադրութեան. «Մոսկուայի հայոց մի ընտանիք, որը բաղկացած է հիւանդ հորից, մորից և չորս զուակներից, վերջին աստիճանի աղքատութեան հասնելով՝ կարօտ է մնացել մի կտոր հացի: Հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն: Մոսկուայի հայ հատարակութիւնը կարող էր ոչ թէ մի, այլ տասն ընտանիք իր հաշուով պահել, եթէ տեղիկութիւն ունենար այդ տեսակ թշուա- ների մասին: Եթէ հանգուցեալ Սուրբհանց ա- լազ քանանս կենդանի լինէր, յիշեալ ընտանիքի աղքատութեան լուրը մինչև Կովկաս չէր հասնի: Ընտանիքի հասցեն այս է. Москва, Сурбхандеи пер. домъ Назарова, Егоры Яковлевичу Р. Ու- շադրութիւն ենք դարձնում այդ անմխիթար երե- տիկի վրա»:

ԳԱՆՁԱԿԻՑ ոչ հեռու գտնուող Բանանց հայա- ընակ գիւղը ուսումնարանը շատ անմխիթար դրութեան մէջ է գտնուում, ինչպէս մեզ գրում է մեր թղթակիցը: Երևութիւնը անպատշաճ է ցուրտ, աշակերանները բոլորի, գրեթէ միայն, ուսու- յիչը անցեալ տարից առճիկն էլ սուտամբ չէ ստա- ջել մինչև այժմ: Բանանց գիւղի ժողովուրդն էլ շատ աղքատ է և հազիւ կարողանում է արճուհի հարկն էլ վճարել:

Կովկասեան բժշկական վարչութիւնն ուղար- կում է բժիշկ Գառնգեղինին Բերլին՝ Կոխի գիւտը ուսումնասիրելու համար: Երջն նպատակով Թիֆ- լիսի քաղաքային վարչութիւնը ուղարկում է Բեր- լին բժիշկ Աւթանդիլովին:

Թիֆլիսի դուռնայի նոյնքները 19-ի նիստում, ի միջի այլոց ընտնութեան ենթարկվեց այն դէպքը, որ պատահել էր նոյնքների 18-ին, երրորդ կարգի ձայնադրների ընտրութեան ժամանակ: Ինչպէս յայտնի է այդ ընտրութիւնը չէ կայացել, քանի որ քաղաքագլուխ Մատիսով փակելով նիստը, հե- ռացել էր ժողովատեղից: Քաղաքագլուխը դու- ռայի նիստում բացատրութիւններ տուցեց այդ մասին, ասելով որ ինքն այդ օրն էլ ուզում էր վարկել այնպէս, ինչպէս վարկել էր առաջին և երկրորդ կարգի ձայնադրների ընտրութեան ժա- մանակ, բայց քանի որ ընտրութեան դահլճում տեղի ունեցան արտասովոր աղմուկներ, իրարախ- ջում և կրքերը սկսեցին լարվել, ուստի ինքը փակեց ժողովը և հեռացաւ: Իր քաղաքարկութեան վերջում քաղաքագլուխն աւելացրեց, որ ինքը վճռել է այդ փակված ժողովը շարունակութիւնը նշանակել մի ուրիշ օր: Գուռնայի մէջ այդ առի- թով սկսվեցան տաք վիճարարութիւններ: Ոմանք այն կարծիքը յայտնելով իսկ, որ քաղաքային վարչութեան թիկնածուների մասին քաղաքում արարած վաճառք չլինում է, ասում էին, որ թէ քաղաքագլուխը և թէ վարչութեան անդամ պ. Խլմալով պէտք է իրանց աւելի ստանախրտ, աւելի անկողնապահ գիւրջ տային, որով և կա- ռող էին խառնաշփոթութիւնների առաջն առնել: Մի քանիսն այն կարծիքի էին, որ ընտրու- թեան ձեռք, քանի որ այդ մասին որոշ նրահանդ- ներ չը կան, պէտք է որոշի ինքը ժողովը: Եղան այնպիսիներն էլ, որոնք ասում էին, թէ արկղերը պէտք է ղնել ոչ թէ քաղաքագլուխի առաջարկած կարգով, այլ ինքն ստացած ձայների առաւելութեան կարգով, այլ կամ այլուրեւանական կարգով և կամ վի- ճակով: Գրանտով կարելի կը լինի հասարակութեան մէջ տարածված լուրերի առաջն էլ առնել, քանի որ կան ասողներ, թէ վարչութեան կողմնակիցներին հրամայված է եղել առաջին 24 արկղի մէջ սպի- տակ գուռներ դրել, իսկ միւսները մէջ-սե. իսկ այդ առաջին 24 արկղերի վրա գրված պիտի լինեն վարչութեան թիկնածուների անունները: Չը նա- յած երկար խօսակցութիւններին, այնու ամենայ-

նիւ դուռնայի այդ նիստում ընտրութեան ձևի մա- սին մի որոշ վճիռ չը կայացաւ և հարցը մնաց բաց:

Կովկասեան լրագիրներից վերջինով, Կ. Պոլսի լրագիրներն էլ հարցրում են, որ իբրև թէ Ա- ռիստակէս և պիտակոս Սեդրակեան պիտի նշա- նակվի Երևանի թեմի առաջնորդ, իսկ Սուքիաս- և պիտակոս Պարզեան—Բնասարբիայի թեմի ա- ռաջնորդ: Հարկաւոր ենք համարում այժմ հա- ռորդի, որ ձիւղ լուրեր չեն գրանդ:

Այս օրերս լոյս տեսաւ մեր ժողովրդական-ման- կական գրող Ղազարոս Աղայեանի բանաստեղծա- կան և մի քանի ուրիշ փոքրիկ գրութեանցիցի ժո- ղովածուն, «Բանաստեղծութիւններ» վերնագրով: Գիրքը հրատարակված է հեղինակի մի խումբ հա- մակողմների ծախսով: Ինչպէս մեզ հարցրում են, այդ ժողովածուն առաջարկված է եղել Թիֆլիսի «Հրատարակչական ընկերութեանը» լոյս ընծայելու համար: «Հրատարակչական ընկերութիւնը» ցան- կացել է ժողովածուի միջից մի քանի ոտանաւոր- ներ հանել և փոխելով լեզուի ուղղագրութիւնը— սակայն հեղինակը չէ համաձայնվել, և այդ պատ- ճառով էլ գիրքը լոյս չը տեսաւ ընկերութեան հաշուով: Գիրքը բաղկացած է 200 կերտից, տպա- գրված է գեղեցիկ թղթի վրա և արժէ 1 ռուբլի 50 կոպէկ: Գրքին կայած է և հեղինակի պատկե- ըրը: Մի նկատուութիւն: Եստ լաւ կը լինէր, որ պ. Աղայեանից գրքի հրատարակչները փոխանակ մի գրքի մէջ ամփոփելու բոլորը, դասաւորելն գրութեանը և առանձին հրատարակելն ման- կական բանաստեղծութիւնները, առանձին ոչ մանկական բանաստեղծութիւնները և առան- ձին արձակ գրութեանը: Այդպիսով ընթերցող- ների իւրաքանչիւր շրջան կարող կը լինէր հեշ- տութեամբ ձեռք բերել հեղինակի այն աշխատու- թիւնները, որոնք մատչելի են իրան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՕԻԻ ԳԻՒՏԸ
Հեռագիրը հարցրեց, որ Վիլնէմ կայսրը բա- րեհանց շնորհել պրոֆէսոր Կոխի կարմիր Արժի առաջին աստիճանի շքանշանը Բերլինի լրագրի- ները հարցրում են, որ կայսրը հետեւեալ խօս- քերն է ասել Կոխի գիւտի առիթով. «Նախա- ինամութեան մի առանձին ողորմութիւնն եմ տես- նում, որ իմ թագաւորութեան ժամանակ այդպի- սի անօրինակելի բարեբարութեան արժանացաւ մարդկութիւնը և գիտութեան այդպիսի յաղթա- նակը գ եր մանացին տարաւ:

Ներքին հիւանդութիւնների մասնադէտ-բժիշկ- ների ընկերութեան վերջին նիստում, Բերլինում, պրոֆէսոր Ֆրենցել, որ բարակացաւ վարակված հիւանդների Charite հիւանդանոցի գլխաւոր բժիշկն է, մի զեկուզում արեց պրոֆէսոր Կոխի նոր գտած բժշկական միջոցի մասին: Ֆրենցել յայտնեց, որ հետազոտութիւնները հաստատեցին պրոֆէսոր Կոխի փորձերը. նոր գտած հեղուկը առողջ մարդկանց կաշուի տակ սրկելուց յետոյ մի ա- ռանձին ազդեցութիւն չէ անում և կամ եթէ ազ- դում է, այն էլ շատ թույլ կերպով: Ընդհակառակը թթաւատով հիւանդներին սրկելուց յետոյ, հե- ղուկի ամենափոքր քանակութեանն անգամ սաս- տիկ է ներգործում: Ֆրենցել փորձեց այդ հեղու- կի ներգործութիւնը թէ թեթեւ թթաւատ ունեցող հիւանդների վրա և թէ երկարատե ու ծանր թոք- սեց հեղուկի 0,001 խորանարդ սանտիմետր քա- նակութիւնից և հետզհետե հեղուկի քանակու- թիւնն աւելացնելով, հասցրեց մինչև 0,01 խորա- նարդ սանտիմետր:

Պրոֆէսոր Ֆրենցել զգուշացրեց բժիշկներին, որ որքան կարելի է առաջին սրկումը փոքր քանակութեանց սկսեն: Նրա ասելով մի դէպ- յում հիւանդը, հեղուկի մեծ քանակութիւն սրու- կելուց 24 ժամ յետոյ՝ մեռաւ, նմանապէս մեռան և երկու թոքախտով հիւանդներ, որոնց թոքերի մէջ արդէն խորշեր (каверны) էին գոյացել. այդ երկու դէպքերի անդամատուութիւնից երեւաց, որ հեղուկը թոքերի վրա նպաստաւոր կերպով չէ ներգործել և հիւանդները մեռել էին հիւանդու- թեան սաստիկ դարգաւանանքն պատճառով:

Թղթակցի նոր պարակված հիւանդների վրա հեղուկի սրկումը աւելի աջող հետևանքներ ու- նեցաւ: Այդ տեսակ հիւանդների վրա սրկումը

շատ արագ և դարմանալի ներգործութիւն ունե- ցաւ. գիշերվայ քրտինքը, որ գլխաւորապէս թու- լացնում է այդպիսի հիւանդներին՝ քչացաւ և ան- հետացաւ, հաղը թուլացաւ և մի քանի դէպքե- ռում բոլորովն անհետացաւ, մարմնի կշիռն ա- լելացաւ և այժմը վերականգնվեցան:

Կոխի այդ նորագիտ հեղուկը թոքախտի մի- լործների (բացցիլներ) վրա մի օտարօտի ներգոր- ծութիւն ունի. նրանց ծայրերը հեղուկի ազդե- ցութեամբ ուռչում են, մէջտեղը արքայում է և միկրոօններ կեանքի ոչ մի նշան չեն ցոյց տալիս: Բայց մի և նոյն ժամանակ երևում է, որ հեղուկը միկրոօններն բոլորովն չէ մեռցնում և անա այդ պատճառով չը պէտք է բաւականապէ միայն նրանով, որ հիւանդի հաղը, քրտինքը, ջերմու- թիւնը կորչում են, այլ ընդունելով, որ հիւան- դութիւնը դեռ բոլորովն բժշկված չէ, պէտք է շարունակել սրկելիները և հիւանդներին լաւ ա- ուղջապահական պայմաններով շրջապատել: Վերջը Ֆրենցել ասեց. «այսպէս չէ պատկանում բա- ցատրել դեռ էլի շատ փաստեր, բայց և այնպէս Կոխի գիւտը պէտք է բժշկական գիտութեան ա- պագայ դարգացման ուղեցոյց աստղը լինի:

Բացի բժիշկներից, այժմ Բերլինում շատ թոք- ակտով հիւանդներ են այլ և այլ կողմերից հա- լաքված: Հիւանդները բժիշկներին պաշարում են ինչպիսի, որ Կոխի նոր գտած հեղուկով իրանց բժշկեն: Իսկ այդպիսի նստակաւի փոփոքը, բա- ցի մշակեց, հիւանդներին օգուտ չէ կարող տալ, քանի որ նոր գտած միջոցով նրանց բժշկել դեռ չէ կարելի: Իսկ միւս կողմից Բերլինի պէս մի կենտրոնում հիւանդներն ամենայն տեղիքից հա- լաքվելով, ընկել են աւելի անաջող առողջապա- հական պայմաններ մէջ, քան թէ նրանք ունէին իրանց տանը կամ կուրորտներում: Պրոֆէսոր Կո- խը յայտնեց, որ հասարակաց կարծիքը սաստիկ ճնշողութեան տակ լինելով, ինքն ստիպվեց վաղ- օրոք հրատարակել իր գիւտը, որի կատարելա- գործելը ժամանակի և փորձերի է կարօտ և ինքն այդպիսի մի քայլ անելով կամեցաւ իր գիւտի մասին տարածված կեղծ տեղեկութիւնների ա- ուաջն առնել: Բերլինի մի քանի լրագիրների ա- սելով, Կոխի նոր գիւտի հրատարակելն էլ կարող է մշանեղ տալ, ինչպէս և դաւանի պահելը. ա- լելի լաւ կը լինէր, որ նոր գիւտը բաւականա- չափ փորձեր անելուց և մեթոդը կատարելագոր- ձելուց յետոյ յայտնէին, մասնաւոր չէ որ այժմ հնար չը կայ պահանջին համեմատ հեղուկ պատ- րաստել:

Ինչպէս էլ որ նկատում է «Boersen Courier» լրագիրը, հեղուկը երկար ժամանակ անկարելի է լինում պահել, մինչև անգամ մեծ կլիմայիներն այդ հեղուկի փոքր քանակութեամբ են մատակա- րարվում, մասնաւոր բժիշկները չեն կարողանում այդ հեղուկը ստանալ, բացի մի քանի բաղա- լարներից, որոնք կանխաւ կարողացան բաւակա- նաչափ հեղուկ ստանալ: Հնարանալի է, որ բը- ժիշկները պարագայունքներով շատ պէտք է ծան- րաբեռնված լինեն, պարզ է, որ 150 հիւանդներն մի օրվայ մէջ այցելելով, անհնարին է ամենքի վրա էլ կատարելա ինամատարութիւն ունենալ: Սրա- նից յետոյ պարզվում է Կոխի ենթադրութիւնը, որ թոքախտի դեմ գտած հեղուկի աննպատակա- կարող է տալ, որի պատճառով էլ հասարակու- թիւնը կասկածանքով կը իրարբերվի դէպի նոր գտած միջոցը: Լրագիրն աւելացնում է, թէ լաւ չէ, որ այնպիսի մեծ հիւանդանոցներ, որպիսին է Charite հիւանդանոցը, շատ քիչ քանակութեամբ է ստացել Կոխի գտած նոր հեղուկը, այն ինչ մասնաւոր բժիշկներ, որոնք Կոխի հետ մօտ յա- լաքելութիւն ունեն, աւելի մեծ քանակութեամբ են ստացել: Այդպէս անարդար վարվելով, միջոց կարելի է տալ միայն հարուստ հիւանդներին բժշկվելու, բայց դա մի և նոյն ժամանակ նպա- տակալարար չէ. անհրաժեշտ է, որ մեծ հիւան- հետազոտութիւններ և փորձեր կարելի է անել և ստացած հետեանքները կարգի բերել: Լրագիրը թախանձանքով խորհուրդ է տալիս Կոխին, որ նա այդպիսի անկարգութիւններին վերջ տալ:

Կոխի գտած հեղուկի դանդաղ պատրաստու- թիւնը միւս կողմից ցաւալի հետեանքներ է տա- լիս. թէ Բերլինում և թէ արտասահմանում ար- դէն խաբեղանք են երևացել, որոնք ահազին փոքր վերջնակով թշուառ և դուրբաստա հի- ւանդներից, բժշկում են նրանց Կոխի կեղծած հեղուկով, որ բացի մշակեց հիւանդները ոչ մի

օգուտ չեն կարող ստանալ: «Königsberger Zei- tung» լրագրի Բերլինի թղթակիցը գրում է, նո- յեմբերի 6-ից, որ վերջին ժամանակ Կոխի հեղուկ է ուղարկված բաւականաչափ Սան-Քէմո բժիշկ վեցուդին և Dahoct մի այլ բժշկին: Այժմ հե- ղուկը հետզհետե պատրաստվելով պէտք է ու- ղարկվի այլ և այլ հաստատութիւններին և ըը- ժիշկներին հետեւալ կարգով.—Բերլինի համալա- րանների կլիմայիներին և մեծ հիւանդանոցներին, գերմանական այլ և այլ համալսարաններին, գեր- մանական մեծ հիւանդանոցներին, Վիլնայի, Պա- րիզի, Լոնդոնի մեծ կլիմայիներին, կայսրութեան բոլոր յայտնի բժիշկներին և վերջապէս մասնա- ւոր բժիշկներին:

Գերմանիայից դուրս ևս սաստիկ են հետաքը- րված Կոխի գիւտով. Կոպենհագենի մագիստրա- տը քաղաքային հիւանդանոցների բժիշկներին մի գումար է առաջարկել Բերլին գնալու. համար Կոխի գիւտը ուսումնասիրելու: Երեւանի 7-ին արդէն ուղեորվեցան Բերլին մի քանի գլխաւոր բժիշկները և նրանց առիտնտները: Թէ Նորվե- գիայում և թէ Ելեդիայում ևս սաստիկ հետաքը- րված են Կոխի գիւտով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիլնայում լուրեր են պատում, որ գերմա- նական պալատական նախկին քարոզիչ Ետեկէր ցանկութիւն է յայտնել ընդունել կաթոլիկու- թիւնը և դառնալ կղերական «Vaterland» լրագրի խմբագիր: Սակայն լրագրի սեփականատէրերը մերժել են այդ առաջարկը, անձեռնտու համա- բելով իրանց համար:

Բերլինում նորից սկսել են շատ խօսել Վիլ- նէմ կայսրի առողջութեան մասին: Ինչպէս յայտ- նի է, նա ակնաչի հիւանդութիւն ունի մի քանի տարուց ի վեր, և այդ հիւանդութիւնն այժմ սկսել է բաւական վտանգաւոր կերպարանք ըն- դունել:

Յունաց նոր մինիստրութիւնը դիմել է այս օրերս Սերբիային և Չեխոօգորիային՝ բարեկամա- կան յայտարարելով:

Պրոֆէսոր Կոխ յայտնել է, որ շատ շուտով իր գիւտի վերաբերեալ մի քանի նոր մանրամաս- նութիւններ կուղարկի և օտար համալսարաննե- րին:

Ինչպէս Բիւսարկի մօտիկ գործակիցները քիչ քիչ ասպարէզից հեռանում են, և նրանց տեղը բռնում են բոլորովն նոր մարդիկ:

Ինչպէս Բիւսարկի գրում է Վիլնէմ I կայսրի պատմութիւնը, և մտադրել է այդ գիրքը հրատա- րակել Լոնդոնում: Այժմանս կայսրը յայտնել է, որ ինքն ուղում է կարգաւ այդ գիրքը, նախ քան տպագրելը, բայց Բիւսարկի մերժել է այդ առա- ջարկութիւնը կատարել: Լուր կայ, որ կայսրը մտադրութիւն է ունեցել ջնջել գրքից այն տեղե- րը, որոնք իր կարծիքով անյարմար կը լինեն:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շաա կարելի է, որ ընթերցողներից շատ քչերը գիտեն թէ ինչ բան է կայսրուհի չայն (КАТРИНА ՉԱՅՆ). բայց պէտք է գիտենալ, որ թէ կայսրուհի չայնը և թէ նոր-նախկինայնից շատ են սիրում այդ կերակուրը և դրա ինչպէս պատրաստելու մասին ուզում ենք քանի մի խօսք ասել: Առաջ որոշ չափով (նայելով քանի հողի են խմորները) չայ են դրում լիքը ջրով կաթնայում և բաւական կրկար եռացնում կրակի վրա. յետոյ քամում են և հետք խառնելով կաթը՝ նորից եռացնում. ապա քրեղաններով տալիս են հիւրերին: Ցանկացողը մէջը գցում է աղ, կարագ, գոմէշի սեր և մի քիչ էլ հնդկական ընկոյղ (հինգընկոյղ): այս ամենից յետոյ քրթում են կողով թխած և լաւ բոված կրկնակներ (biscuits) և կամեց կամեց անուշ անուշ: Վերոյիշեալիս կերպով պատրաս- տում են իսկապէս կլատերիսօզարի հայերը, այն ինչ կայմոխ և նողանքը դմակին էլ շատ շնոր- հակալ կը մնան, թէ որ ունենան. գիտեալ պէտք է և այն, որ ամեն չայից չեն պատրաստում, այլ սրա համար իսկապէս կայ առանձին մի տեսակ տախտակի կտորի նման մամլած (прессованный) տերեւներից շինած չայ, որը կարելի է միայն կայ- նով ջարդել:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ
ՊԵՏԵՐՈՒԹԻՒՆ, 20 նոյեմբերի: Ենթադրութիւն կայ Սերբիայի հետ հիւպատոսական պայման կա- պել: Առաջ հիմնուում է մի քանի ուսուցչ հիւպա-

